ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԻ
ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կ-**259**-14.08.2019-ՏՏԳԲ-011/0«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», Կ-**259**[1]-14.08.2019-ՏՏԳԲ-011/0 «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոձոխություններ կատարելու մասին օրենքի նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկներ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՀՀ կառավարության առաջարկները		**1.** «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծի 5-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով. «2) 4-րդ մասի ««ե» ենթակետով» բառերը փոխարինել ««զ» ենթակետով» բառերով:» Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ կետը հանել, քանի որ «Հայաստանի հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-98-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 33-րդ հոդվածի 5-րդ մասը արդեն իսկ շարադրվել է նոր խմբագրությամբ:	Ընդունվել է: Կատարվել 1 համապատասխան փոփոխություն: Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովի անդամները դրական եզրակացություն տվեցին Հանձնաժողովի անդամները դրական եզրակացություն տվեցին

ԱԺ պատգամավոր Սերգեյ Բագրատյանի առաջարկը		«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», նախագիծը լրացվել լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով **Հոդված 12.** Սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնին է վերադարձնում մինչև ջրի ազգային խորհրդի լուծարումն իր մոտ առկա ջրօգտագործման թույլտվությունների հայտերի փաթեթները՝ դրանք սահմանված կարգով գնահատելու համար: Հայտի գնահատման ժամկետը վերահաշվարկվում է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնին փաթեթները վերադարձնելու օրվանից:	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է նոր 12-րդ հոդվածով	Հանձնաժողովի անդամները դրական եզրակացություն տվեցին